# ԵՊՀ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ N «ԵՊՀ-ԷԱՃԾՁԲ-24/09-1» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «11» սեպտեմբերի 2024թ.

«Երևանի պետական համալսարան» Հիմնադրամը, ի դեմս պրոռեկտոր Ա. Գ. Մալխասյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա /այսուհետ «Պատվիրատու» մի կողմից, և «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Ղազարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա այսուհետև՝ «կատարող», մյուս կողմից կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հիմք ընդունելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները՝կողմերը համաձայնեցին կատարել Պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայության ծավալների ավելացում, որը չի գերազանցում պայմանագրի ընդհանուր գնի տասը տոկոսը՝ համաձայն Կատարողի կողմից ներկայացրած գրության և պատվիրատուի կողմից տրված համաձայնության:

1.2 Կողմերը համաձայնեցին հաստատել սույն համաձայնագրի անբաժանելի մաս կազմող վճարման ժամանակացույցը:

1.3 Հիմք ընդունելով Պատվիրատուի 2024թ-ի բյուջեն հատկացնել համապատասխան ֆինանսական միջոցներ, որը ներկայացված է սույն Համաձայնագրի Հավելված 1-ով:

1.4 Լրացուցիչ Ծառայության մատուցման գինը սահմանել 11,806,667 /տասնմեկ միլիոն ութ հարյուր վեց հազար վեց հարյուր վաթսունյոթ/ ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

1.5 Հիմք ընդունելով վերոգրյալը «ԵՊՀ-ԷԱՃԾՁԲ-24/09-1» ծածկագրով գնման պայմանագրի 4.1 կետի գինը՝ 483,000,000 (չորս հարյուր ութսուներեք միլիոն) ՀՀ դրամ գումարը, փոխարինել 494,806,667 (չորս հարյուր իննսունչորս միլիոն ութ հարյուր վեց հազար վեց հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ գումարով:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

| Պատվիրատու | Կատարող |
|---|---|
| «ԵՊՀ» Հիմնադրամ | «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ |
| ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | ք. Երևան, Սարյան 20/1, բն. 69 |
| «Արդշինբանկ» ՓԲԸ | ՀՎՀՀ 00251512 |
| ՀՎՀՀ 01506928 | «Արարատբանկ» ԲԲԸ ու.մ/ճ |
| Հ/Հ 247010000906 | Հ/Հ 1510012956260 0 |

*Հավելված N 1*
*«11» սեպտեմբերի 2024թ. կնքված*
*2 համաձայնագրի*

*«19» հունվարի 2024թ. կնքված*
*«ԵՊՀ-ԷԱՃԾՁԲ-24/09» ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայություն | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Հիմնական գնման առարկայի գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների | | | | | | | | | | | |
| | | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 90911110/501 | ԵՊՀ սանիտարական մաքրության ծառայություններ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 11 806 667 | 11 806 667 | 11 806 667 | 11 806 667 | 11 806 667 |

**ԳՆՈՐԴ**
**«ԵՊՀ» Հիմնադրամ**
**ք.Երևան. Ալեք Մանուկյան 1**
**«Արդշինբանկ» ՓԲԸ**
**ՀՎՀՀ 01506928**
**Հ/Հ 247010000906**
**պրոռեկտոր՝ Ա. Գ. Մալխասյան**
**---------------------------------**
**/ստորագրություն/**
**Կ.Տ**

**ՎԱՃԱՌՈՂ**
**«Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ**
**ք. Երևան, Սարյան 20/1, բն. 69**
**ՀՎՀՀ 00251512**
**«ԱՐԱՐԱՏ ԲԱՆԿ» ԲԲԸ**
**Հ/Հ 1510012956260**
**Տնօրեն՝ Գ. Ղազարյան**
**---------------------------------**
**/ստորագրություն/**
**Կ.Տ**